ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/68

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Եղեգնաձորի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Էներգացանցշին» ԲԲԸ

Մասնակցությամբ՝
«Էներգացանցշին» ԲԲԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՎՁՄ-ԵՀ-ԳՀԱՇՁԲ-20/Լ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, թաղամասերի և փողոցների լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Էներգացանցշին» ԲԲԸ-ի (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) կողմից 02.10.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Բողոքաբերը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՎՁՄ-ԵՀ-ԳՀԱՇՁԲ-20/Լ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ «Էներգացանցշին» ԲԲԸ-ի հետ պայմանագրի կնքման գործընթացը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 30.09.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 02.10.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/14912-2020 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 02.10.2020թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

Բողոքներ քննող անձի 05.10.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ՝ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/68 համարի ծածկագիրը:

09.10.2020թ.-ին, 21.10.2020թ.-ին և 30.10.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 21.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.10.2020թ.-ին:

2. «Էներգացանցշին» ԲԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Էներգացանցշին» ԲԲԸ-ն 02.10.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Էներգացանցշին» ԲԲԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ «ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ, ԿԱՄՈՅԻ /ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂՈՒՑ ՄԻՆՉԵՎ Վ. ԳԱՌՐԳՅԱՆ/, ԱԹԱՐԲԵԿՅԱՆ /ՄՅԱՍՆԻԿՅԱՆ-ԱՐՍԵՆՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿԻՑ 280 Մ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ/ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ: ՆՈՐ ԱՎԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ (ԱՅԳԵՁՈՐԻ ՓՈՂՈՑ, ԱՅԳԵՁՈՐԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, ՍՅՈՒՆԻՔԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ,ՊՌՈՇՅԱՆ ՓՈՂՈՑ, ՊՌՈՇՅԱՆ 1-ԻՆ և 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔՆԵՐ» ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ «ՎՁՄ-ԵՀ-ԳՀԱՇՁԲ-20/Լ» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ

ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ և Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել ընտրված մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Էներգացանցին» ԲԲԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Էներգացանցին» ԲԲԸ-ին ներկայացվել է «ՎՁՄ-ԵՀ-ԳՀԱՇՁԲ-20/Լ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար պայմանագիր կնքելու առաջարկ:

«ՎՁՄ-ԵՀ-ԳՀԱՇՁԲ-20/Լ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար պայմանագիր կնքելու առաջարկը ստանալուց անմիջապես հետո «Էներգացանցին» ԲԲԸ-ն դիմել է «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ին՝ Եղեգնաձոր համայնքի կողմից հայտարարված «ՎՁՄ-ԵՀ-ԳՀԱՇՁԲ-20/Լ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով պայմանագրի և որակավորման ապահովման նպատակով բանկային երաշխիքներ ստանալու համար:

Պայմանագրի կնքման նպատակով սահմանված 10 աշխատանքային օրվա ընթացքում «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից բանկային երաշխիքների տրամադրումը ձգձգվել է /վերոհիշյալ խնդրի մասին «Էներգացանցին» ԲԲԸ-ն տեղեկացրել է Պատվիրատուին/:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 21.09.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշել է, որ «Էներգացանցին» ԲԲԸ-ի հետ պայմանագրի և որակավորման ապահովումը ժամանակին չներկայացնելու պատճառով դադարեցնել պայմանագրի կնքման գործընթացը:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայություն¬ների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին: Փակ մրցույթի դեպքում հայտերը հրավեր ստացած բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության դեպքում կարող են բացվել մինչև հրավերում նշված ժամկետը լրանալու օրը:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Օրենքի 35-րդ հոդվածի՝

1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

2-րդ մասի համաձայն՝ պայմանագրի ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի կամ

բանկային երաշխիքի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Հրավերի 9.5 կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հրավերի 10.1 կետի համաձայն՝ որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում 15 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի ապահովումները:

Հայտնում ենք, որ «Էներգացանցշին» ԲԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին է ներկայացվել՝ «ՎՁՄ-ԵՀ-ԳՀԱՇՁԲ-20/Լ» ծածկագրով գնման ընթացակարգի հաստատված պայմանագրի օրինակը:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 21.09.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Էներգացանցշին» ԲԲԸ-ի հետ պայմանագրի և որակավորման ապահովումը ժամանակին չներկայացնելու պատճառով դադարեցվում է պայմանագրի կնքման գործընթացը:

ՀՀ կառավարության կողմից 2020թ. մարտի 16-ին ընդունվել է թիվ 298-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին: Վերոհիշյալ որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով հայտարարվել է արտակարգ դրություն, որը երկարաձգվել է մինչև 2020թ. մայիսի 14-ը, այնուհետև համապատասխան որոշումներով այն երկարաձգվել նաև մինչև սեպտեմբերի 11-ը, որի պարագայում երկրում ստեղծվել էր մի իրավիճակ, երբ գրեթե անհնարին է դարձել /առձեռն/ փաստաթղթաշրջանառությունը տարբեր հաստատու-թյունների հետ, դեռ ավելին, համատարած խնդիրներ առաջացել նաև ՀՀ-ում գործող բանկային երաշխիքների տրամադրման գործընթացում, որի պարագայում գրեթե 3 ամիս առաջացել են նմանատիպ խնդիրներ բոլոր մրցույթների շրջանակներում:

Ինչպես արդեն հայտնել ենք, «ՎՁՄ-ԵՀ-ԳՀԱՇՁԲ-20/Լ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար պայմանագիր կնքելու առաջարկը

ստանալուց անմիջապես հետո «Էներգացանցշին» ԲԲԸ-ն դիմել է «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ին՝ եղեգնաձոր համայնքի կողմից հայտարարված «ՎՁՄ-ԵՀ-ԳՀԱՇՁԲ-20/Լ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով պայմանագրի և որակավորման ապահովման նպատակով բանկային երաշխիքներ ստանալու համար:

Պայմանագրի կնքման նպատակով սահմանված 10 աշխատանքային օրվա ընթացքում «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից բանկային երաշխիքների տրամադրումը ձգձգվել է, որի մասին «Էներգացանցշին» ԲԲԸ-ն տեղեկացրել է Պատվիրատուին և համապատասխան գրություն ներկայացրել նաև ՀՀ ֆինանսների առաջին տեղակալ Կ. Բրուտյանին:

Վերը նշված փաստերը վկայում են, որ պայմանագրի և որակավորման ապահովման նպատակով «Էներգացանցշին» ԲԲԸ-ի կողմից բանկային երաշխիքների չներկայացնելը ամբողջությամբ կապված է «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի և ՀՀ-ում կորոնավիրուսի հետ կապված արտակարգ իրավիճակի հետ, ուստի գտնում ենք, որ նման պայմաններում ԲԲԸ-ն չպետք է զրկվի պայմանագիր կնքելու իրավունքից, քանի որ ԲԲԸ-ին 1-2 օր ուշացումով տրամադրվել են որակավորման ապահովումը /ՀԲԵՆ20/312-01/ և պայմանագրի ապահովումը /ՀԲԵՆ20/311-01/, որը ստանալուն պես այն ներկայացվել է Պատվիրատուին:

Պատվիրատուն 11.09.2020թ. ստանալով «Էներգացանցշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ 10 օր սպասել է և նոր հրավիրել գնահատող հանձնաժողովի նիստ, որով էլ կայացրել է «Էներգացանցշին» ԲԲԸ-ին պայմանագրի կնքելուց զրկելու որոշում:

Ավելին՝ ուշադրությունն ենք հրավիրում նաև այն կարևորագույն հանգամանքի վրա, որ գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը տեղի է ունեցել 21.09.2020թ. /այսինքն ոչ աշխատանքային օր գնահատող հանձնաժողովը նիստ է հրավիրել և որոշումներ կայացրել/, իսկ նույն թիվ 3 արձանագրությունը հրապարակվել է տեղեկագրում 24.09.2020թ.՝ մինչդեռ պետք է հրապարակվեր հաջորդող օրը:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոհիշյալ փաստական հանգամանքները և իրավական նորմերը՝ գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Էներգացանցշին» ՓԲԸ-ին պայմանագրի կնքելուց զրկելու մասին որոշումը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից և միտված չէ ապահովելու գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանն ու պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով բառերի և ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի իրավական ակտի դրույթներից, նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ Օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում խախտվել են գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

Վերոհիշյալ բողոքը քննելիս, բողոքներ քննող անձին խնդրում են նկատի ունենալ, որ «Էներգացանցշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է նվազագույն գնային առաջարկ, ուստի վերջինիս պայմանագիր կնքելուց զրկելու դեպքում պետական բյուջեին կհասցվի էական վնաս:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Էներգացանցշին» ԲԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ՎՁՄ-ԵՀ-ԳՀԱՇՁԲ-20/Լ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ «Էներգացանցշին» ԲԲԸ-ի հետ պայմանագրի կնքման գործընթացը:

3. <u>Եղեգնաձորի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 05.10.2020թ.-ին դիմել է Եղեգնաձորի համայնքապետարանին՝ հնարավորություն տալով «Էներգացանցշին» ԲԲԸ-ի կողմից 02.10.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 06.10.2020թ.-ին թիվ 797 գրությամբ ներկայացրել է «Էներգացանցշին» ԲԲԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ առանց գրավոր դիրքորոշման:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/68 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Եղեգնաձորի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից թաղամասերի և փողոցների լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 10.08.2020թ.-ին հայտարարվել է «ՎՁՄ-ԵՀ-ԳՀԱՇՁԲ-20/Լ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Էներգացանցշին» ԲԲԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 17.08.2020թ.-ի կայացրած նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Էներգացանցշին» ԲԲԸ-ն:

iv. 20.08.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՎՁՄ-ԵՀ-ԳՀԱՇՁԲ-20/Լ» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից ճանաչված «Էներգացանցշին» ԲԲԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը՝ (այսուհետ նաև՝ Հայտարարություն) սահմանելով 5 օրացուցային օր անգործության ժամկետ:

v. Պատվիրատուն 26.08.2020թ.-ին էլ. փոստի միջոցով դիմելով Ընկերությանը՝ հայտնել է, որ պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա

ընթացքում անհրաժեշտ է ներկայացնել որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները՝ բանկային երաշխիքի կամ կանխիք փողի ձևով:

Միաժամանակ Ընկերությանը զգուշացվել է, որ պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիր չստորագրելու և որակավորման ու պայմանագրի ապահովումները չներկայացնելու դեպքում վերջինս կզրկվի պայմանագիր կնքելու իրավունքից:

vi. Հանձնաժողովի 21.09.2020թ.-ի կայացրած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Էներգացանցշին» ԲԲԸ-ի հետ դադարեցնել պայմանագրի կնքման գործընթացը՝ Ընկերության կողմից պայմանագրի և որակավորման ապահովումները ժամանակին չներկայացնելու պատճառով:

vii. «Էներգացանցշին» ԲԲԸ-ի կողմից 11.09.2020թ.-ին ներկայացվել են «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված թիվ 652-12084 պայմանագրի կատարման ապահովումը և թիվ 652-12085 որակավորման ապահովումը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Էներգացանցշին» ԲԲԸ-ի կողմից 02.10.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում: Պայմանագրի ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի կամ

բանկային երաշխիքի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Եղեգնաձորի համայնքապետարանի կողմից թաղամասերի և փողոցների լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 10.08.2020թ.-ին հայտարարված «ՎՁՄ-ԵՀ-ԳՀԱՇՁԲ-20/Լ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Հրավերի (այսուհետ՝ Հրավեր) 9.5 կետի համաձայն՝ Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի

նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Եղեգնաձորի համայնքապետարանի կողմից թաղամասերի և փողոցների լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 10.08.2020թ.-ին հայտարարված «ՎՁՄ-ԵՀ-ԳՀԱՇՁԲ-20/Լ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Էներգացանցշին» ԲԲԸ-ն Հանձնաժողովի 17.08.2020թ.-ի կայացրած նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Վերոնշյալով պայմանավորված Պատվիրատուն 26.08.2020թ.-ին էլ. փոստի միջոցով դիմելով Ընկերությանը՝ հայտնել է, որ պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտ է ներկայացնել որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները՝ բանկային երաշխիքի կամ կանխիք փողի ձևով: Միաժամանակ Ընկերությանը զգուշացվել է, որ պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիր չստորագրելու և որակավորման ու պայմանագրի ապահովումները չներկայացնելու դեպքում վերջինս կզրկվի պայմանագիր կնքելու իրավունքից:

«Էներգացանցշին» ԲԲԸ-ի կողմից 11.09.2020թ.-ին ներկայացվել են «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված թիվ 652-12084 պայմանագրի կատարման ապահովումը և թիվ 652-12085 որակավորման ապահովումը, սակայն Հանձնաժողովի 21.09.2020թ.-ի կայացրած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Էներգացանցշին» ԲԲԸ-ի հետ դադարեցնել պայմանագրի կնքման գործընթացը՝ Ընկերության կողմից պայմանագրի և որակավորման ապահովումները ժամանակին չներկայացնելու պատճառով:

Բողոքներ քննող անձը, ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված փաստերը, հարկ է համարում արձանագրել, որ Օրենսդիրը պայմանագրի ապահովում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանել է այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 10 աշխատանքային օրյա ժամկետ, որն ինքնանպատակ չէ և դա այն օբյեկտիվ ժամանակահատվածն է, երբ գնման գործընթացի ընտրված մասնակիցը ցանկության դեպքում կարող է իրացնել Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, **եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողում նշված ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու

մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի սեպտեմբերի 11-ը ներառյալ ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու հանգամանքով պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում գործող բանկային երաշխիքների տրամադրման գործընթացում խնդիրների առաջացմանը, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ արտակարգ դրություն հայտարարելու հանգամանքը օբյեկտիվորեն չէր կարող ազդել Ընկերության ստանձնած պարտավորությունների չկատարման վրա, քանի որ բողոքի քննության ընթացքում Ընկերության կողմից չներկայացվեցին բավարար փաստեր ու հանգամանքներ, որոնց առկայության պարագայում հնարավոր կլիներ հաստատված համարել արտակարգ դրություն հայտարարելու հանգամանքի՝ Ընկերության կողմից բանկային երաշխիքները ժամանակին չներկայացնելուն օբյեկտիվորեն ազդելու փաստի մասին: «Էներգացանցշին» ԲԲԸ-ի կողմից չներկայացվեց կոնկրետ որևէ գործողություն, որը հաղթահարելը, պայմանավորված արտակարգ դրությամբ, օբյեկտիվորեն եղել է անհնարին՝ կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում:

Բողոքներ քննող անձը, անդրադառնալով Ընկերության կողմից ներկայացված «Արդշինբանկ» ՓԲԸ-ի 29.10.2020թ.-ի թիվ 652-12 համարի ծանուցման պատճենին, որի համաձայն բանկային երաշխիքները բանկի կողմից տրամադրվել են որոշակի երկարաձգումներով, ինչը կապված է եղել Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ կառավարության կողմից 2020 թվականի մարտի 16-ին ընդունված թիվ 298 որոշման հետ, հարկ է համարում նշել, որ վերոնշյալ ապացույցը ներկայացվել է պատճենի ձևով, այլ ոչ բնօրինակով, ինչի պարագայում Բողոքներ քննող անձն այն չի կարող դիտարկել որպես արժանահավատ փաստաթուղթ, այն հանգամանքների հաշվառմամբ, որ չներկայացվեց այդ փաստաթղթի բնօրինակը կամ բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը, ինչպես նաև Ընկերության կողմից չներկայացվեց բնօրինակը ներկայացնելու անհնարինության վերաբերյալ որևէ հիմնավորում:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Բողոքաբերի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ տվյալ դեպքում, «Էներգացանցշին» ԲԲԸ-ն մինչև ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելը, տեղեկացված լինելով որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացնելու՝ հրավերով սահմանված

պահանջի մասին, բանկային երաշխիքները ներկայացրել է գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ժամկետից ուշ, որպիսի պայմաններում Հանձնաժողովի կողմից Ընկերության հետ պայմանագրի կնքման գործընթացը դադարեցնելու մասին կայացված որոշումն իրավաչափ է և բխում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից, որպիսի պայմաններում «Էներգացանցշին» ԲԲԸ-ի ներկայացրած բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էներգացանցշին» ԲԲԸ-ի կողմից 02.10.2020թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/68 ծածկագրով ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**